

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Կոմիտասը բազմաթիվ թեկնածուներով կապված է եղել Հայ, ինչպես և օտարազգի ինտելիգենցիայի շատ ներկայացուցիչների հետ: Այդ կապն արտահայտվել է ինչպես անձնական շփումների, նույնպես և նամակագրության միջոցով: Թեև իր իսկ խոստովանությամբ, Կոմիտասը նամակ գրել չի սիրել, բայց և այնպես իր բազմաթիվ անհատական գործունեության շնորհիվ ստիպված է եղել ընդարձակ նամակագրություն վարել շատերի հետ: Գծախոտաբար, նրա գրած նամակների զգալի մեծամասնությունը և ստացած նամակները համարյա ամբողջությամբ անհետ կորել են: Այս հանգամանքը մեզ զրկում է նրա կյանքի ու գործունեության հետ կապված շատ կարևոր հարցեր պարզելու հնարավորությունից:

Պարբերական մամուլից և Կոմիտասի վերաբերյալ աշխատություններից մեր հասարակությանն արդեն հայտնի են նրա այն նամակները, որոնք գրված էին Բեռլինից և ուղղված էին Լեմիթսի Գեորգյան ճեմարանի տեսուչ Գ. Կոստանյանին: Հայտնի են նաև Կոմիտասի նամակները Հովհ. Թումանյանին՝ «Անուշ»-ը օպերայի վերածելու հարցի մասին: Մասամբ էլ հայտնի են նրա՝ օր. Մարգարիտ Բաբայանին գրած նամակները, որոնցից ընդարձակ քաղվածքներ են բերված վերջինիս գրած հոգվածներից մեկում: 1957 թվականին օր. Մ. Բաբայանը Հայկական ՍՍՌ ԳԱ Արվեստի պատմության և տեսության սեկտորին ուղարկեց Կոմիտասի կողմից իրեն հասցեագրված մի շարք նոր նամակների պատճենները: Հրապարակվեցին նաև Կոմիտասի նամակները՝ գրված իր աշակերտ Սպիրիդոն Մելիքյանին: Այժմ, օգտվելով նոր հնարավորությունից, հասարակությանն ենք ներկայացնում Կոմիտասի նամակները, գրված Արշակ Չոպանյանին: Դրանք Ա. Չոպանյանի հարուստ արխիվի հետ ստացվել են Փարիզից և գտնվում են Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում:

Ներկա նամակները կազմում են Կոմիտասի և Ա. Չոպանյանի նամակագրության մի մասը միայն: Դրանց մեջ Կոմիտասին հասուկ շիտակությամբ ու հատակությամբ պարզաբանված են մի շարք կարևոր հարցեր, որոնք մինչև այժմ մնացել էին անհայտության քողով պարուրված: Այդ հարցերի թվին են պատկանում, օրինակ, հայ երաժշտության հետ օտարերին ծանոթացնելու գործում մեծ գլուշության անհրաժեշտությունը, ժողովրդական երգերի ոճական անաղարտության, Կոմիտասին և իր ընկերներին էջմիածնում հայաժողովների և վերջապես, մի շարք բազմաթիվ աշխարհայացքային հարցեր:

Ընթերցողներն այս նամակներում կգտնեն շատ հետաքրքրական և արժեքավոր մտքեր այն մասին, որ աշխարհիկ ժողովրդական երգերն իրենց ոճական անաղարտությամբ պահպանվել են հայ գյուղերում և, ընդհակառակը, աղավաղվել են քաղաքներում, որ հայ հոգևոր երգերից ամենից ավելի «ծանր ոճն է խանդավառը», որ Պապա Համբարձումբ «տաճիկ եղանակներու վերա է ձեռել» մեր շարականները և այլն:

Հրապարակվող նամակներում Կոմիտասը հաճախ է անդրադարձել հայ ժողովրդական երգերի պատկարզման, ուսումնասիրման և հրապարակման հարցերին: Նա անհրաժեշտ է համարում այդ երգերը հրատարակելուց առաջ ենթարկել գիտական լուրջ քննության, քանի որ «մի շարք նորություններ, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ մեր երաժշտության անդաստանը մշակներ չունի, սորա նորա անունով հրապարակ են ելնում և գեո գործը ծաղիկ հասակի մեջ կամ նույնիսկ չբացված կոկոն ծաղիկը թառամեցնում միանգամայն»: Այս պատճառով էլ նա խորհուրդ է տալիս երգերի բնորոշությունը կատարել մեծ գլուշությամբ և աղա միայն տպագրել: Օտարներին հայ աշխարհիկ և հոգևոր երաժշտության ծանոթացնելու կարևոր

¹ Մ. Բաբայան, Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով, «Մշակույթ», Փարիզ, 1933, № 3—4, էջ 153—163:

ձևերից մեկը նա համարում է համերդ-դասախոսությունների կազմակերպումը, միջոցառում, որին ինքը հաճախ է գիմել և հասել է փայլուն արդյունքների:

Ա. Չոպանյանին գրած նամակներում Կոմիտասը բազմիցս անդրադարձել է էջմիածնի վանքի միաբանության ներքին կյանքին հարցերին, այն գաղջ մթնոլորտին, որը տարիներ շարունակ թունավորել է իր կյանքը, գրկել իրեն հանգստից և ամբողջապես ստեղծագործական աշխատանքով զբաղվելու հնարավորությունից: Եթե մի շարք այլ մարդկանց, և հատկապես օր. Մ. Բարսեղյանին գրած նամակներում Կոմիտասը բավականացել է միայն այդ հանգամանքը մատնանշելով և խնամքով թաքցրել է այն մարդկանց անունները, որոնք հետապնդել և հալածել են իրեն ու իր ընկերներին, ապա այստեղ նա բացեիբաց տվել է այդ անունները: Մինչև այժմ Կոմիտասի կենսագիրները խոսելով այդ մարդկանց մասին, ստիպված էին միայն ենթադրություններ արել: Ամենայն Հայոց Կաթողիկոս Մ. Խրիմյանի մահից հետո տեղապահ նշանակված արքեպիսկոպոս Սուրենյանը, Մեսրոպ վարդապետը (որին Կոմիտասը կներել է «ուլտ» մականունով), Հուսիկ արքեպիսկոպոսը, Սիրական Տիգրանյանը և ուրիշներ—ահա դրանք էին, որ տարիներ շարունակ բամբասեցին և հալածեցին Կոմիտասին ու նրա ընկերներին: 1910 թվականին Կոմիտասը հեռացավ էջմիածնից, տեղափոխվեց Կ. Պոլիս, որտեղ հետագայում ենթարկվեց թուրքական բարբարոս կառավարության կազմակերպած արտոյի սանջանքներին և ստացավ անբուժելի հոգեկան հիվանդություն:

Մինչև այժմ մեր երաժշտագիտությունը փաստական նյութի մեծ պակաս էր զգում Կոմիտասի աշխարհայացքի հետ կապված հարցերի, հատկապես դաշնակցության նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի պարզաբանման գործում: Հրապարակվող այս նամակները տալիս են այդ հարցերի սպառիչ պատասխանը: 1969 թվականին գրած նամակներից մեկում անդրադառնալով դաշնակցությանը և նշելով, որ պետությունը որոշել է ինչ գնով էլ լինի «ջնջել դաշնակցություն կոչված հաստատությունը» և այդ նպատակով կատարել է բազմաթիվ ձերբակալություններ, Կոմիտասը միաժամանակ ընդգծում է, որ «ժողովուրդը կարծես թե ուրախ է, որ մի անկոչ հարկահանի ձեռքից ու կամայականություններիցն ազատվում է. ոչ մի ցավ, ոչ մի վիշտ չի արտահայտում այս առթիվ»: Մի այլ նամակում, գրված նույն թվի հուլիսի 14-ին, դարձյալ շոշափելով նույն խնդիրը և հատկապես բնդգծելով, որ «դաշնակցական խմբակի ատամները թափած է», Կոմիտասն ավելացնում է. «Էլ բավ է, որքան քանդեցին մեր ներքին և արտաքին կյանքը՝ անմիտ հպարտությամբ և փուշ ուժով: Մի բան մեզ խիստ ուրախացնում է, որ մեր հայրեր Տաճկաստանում արդեն լավ և շուտ բմբռնեցին այդ կուսակցությունների կործանիչ և ավերիչ ուղղությունները և թոթափեցին կամ թոթափելու ջանքեր են անում, որ մի ապիկար ինամակալություն չավելանա»:

Նամակներում խոսվում է նաև հայկական ազգային-ազատագրական շարժման մասին: Կոմիտասն ունեցել է հստակ մի ծրագիր, որը շարադրված է 1912 թվականի դեկտեմբերի 25-ի նամակում: Նա գտնում է, որ հայերը կարող են հասնել ազատագրության միայն Ռուսաստանի օգնությամբ, բանի որ այդ գործին մեծապես նպաստում է շահերի համընկնումը: Եսի և առաջ չպետք է բաժանվել, չպետք է խաբվել «Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն»: Ընդհակառակը, նա անհրաժեշտ է համարում համախմբվել և «գործնական ճամփան» բռնել: Իր ծրագիրը նա բացահայտում է հետևյալ խոսքերով. «Ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ, երրորդ քայլն արդեն ինքը ռուս հեղափոխությունն է, որ պիտի անեն...»:

Այդպիսին էր ահա Կոմիտասի ազգային-ազատագրության ծրագիրը, որ շատ բան է պարզում Կոմիտասի դաշնափարական գիրքերում տեսակետից: Որքան էլ անորոշ լինի նրա գաղափարաչափն էությունը և պարուրված լինի ազգային պաճուճանքով, մի բան պարզ է, որ Կոմիտասն ուներ ճիշտ կողմնորոշում, լավ էր հասկացել նվթրապայի իմպերիալիստական գիշատիչ պետությունների քաղաքականության խարդախությունը և իր հույսը դրել էր ռուսական հեղափոխության վրա: Այս հանգամանքը չափազանց կարևոր է և նոր լույս է սփռում Կոմիտասի քաղաքական բմբռնումների պարզաբանման վրա:

Ստորև բերում ենք Կոմիտասի նամակները Ա. Չոպանյանին՝ տալով համապատասխան համառոտ ծանոթագրություններ: Նամակների տեքստը տրվում է անփոփոխ, պահպանելով Կոմիտասի գրելածն ամբողջությամբ և միայն հազվադեպ դեպքերում կատարված են կետադրական վերափոխություններ:

14/1 1958 թ.

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

4 հոկտ. 1902

Սիրելի բարեկամ.

Անշուշտ պետք է մտածեիր, թե ես որքան անքաղաքավար գտնվեցա Ձեր նամակի պատասխանն ուղարկելով. բայց պետք է ասեմ, որ ցայսօր չկարողացա գիր գրել, որովհետև կուղևի երգերն էլ միատեղ ուղարկել, բայց տեսա, որ դեռ կարող է ուշանալ, ուստի խնդրելով ներողություն, կհայտնեմ, որ ուրախ եմ մի ալգպիսի կարևոր երեկույթին մասնակցելու համար: Շուտով կուղարկեմ Ձեզ ժողովրդական երգեր, թե՛ խմբի, թե՛ մեներգի համար, խնդրելով, որ Դուք հսկեիր, որ բանագողեր չլինեն, որովհետև պատրաստում եմ տպագրության համար: Իսկ Շնորհալու երգը ուղարկել չեմ կարող, գոնե, այս անգամուն երեկույթի համար, որովհետև խիստ վերադված եմ. ձեռքիս երկու կարևոր բան կա, որ տպագրության եմ պատրաստում:

Ողջունելով Ձեզ սրտանց Ձեր Կ. Վ.

[Այցետոմս]

Սիրելի բարեկամ.

Շնորհալույթյամբ ստացած եմ Ձեր գիրը, որպես և Անահիտը, ուրախ եմ, որ ինձ քաջալերած եք, բայց վախճամ, սխալված լինիք: Ստացա նույնպես Ձեր նարեկացու մասին արած ուսումնասիրությունը, քանի մի մանր նկատողություն պետք է անեմ Ձեզ մի այլ անգամ նամակովս, երբ ձեզ ղրկեմ իմ ժողովրդական երգերն, որ տակավին կուսումնասիրեմ մեծ ղգուշությամբ պ. Մանուկ Աբեղյանին հետ միատեղ:

Ձեզ միշտ հարգող

[Այցետոմսի մյուս երեսում]

Շնորհավոր նոր տարի և բարի կաղանգ [ձեռագիր]
Կոմիտաս վարդապետ [տպած]

Ս. Էջմիածին, Ա. [հունվար] 10/23, 1903

Սիրելի բարեկամ.

Ձեր գիրն ստացա և գեռ չէի ուղարկել երգերը, ուստի Ձեր գրածին համաձայն մնաց ձմեռվան երեկույթի: Ներեցեք, եթե հասցնել չկարողացա հունվար ամսվան տեղի ունենալիք երաժշտական երեկույթին, որովհետև ես մենակ եմ, այստեղ էլ, աստված տվել է, գործեր շատ, հնարավոր չեղավ Ձեր բարի ցանկությունն իրագործելը, բայց հոգ չէ. երկրորդի համար կպատրաստվիմ: Որպեսզի ամեն բան ժամանակին հասնի, խնդրեմ, անմիջապես հայտնել հաճե՞ք՝

մոտավորապես ո՞ր ամսվան մեջ պետք է զրվի երեկույթը, որ ես էլ մյուս գործերս այնպես դասավորեմ, որ հասցնել կարողանամ:

Ձեր դրած Պապա Համբարձումն¹ անշուշտ Արմաշու Համբարձումն է. եթե այդ է, միանգամայն չվստահեք նորա դպրոցին, որովհետև տաճիկ եղանակներու վերա է ձևել նա մեր շարականները: Ի սեփան աստծո, մինչև լուրջ դիտական քննության չենթարկեք մի վստահեք նոցա վերա. մանավանդ թե այժմ մի շարք նորեկուկներ, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ մեր երաժշտության անդամները մշակներ չունի, սորա նորա անունով հրապարակ են ելնում և դեռ գործը ծաղիկ հասակի մեջ կամ նույնիսկ չբացված կոկոն ծաղիկը թառամեցնում միանգամայն. ճշմարիտն ասեմ, ես կասկածում եմ. ավելի շուտ տաճիկ եղանակներ և այն էլ տաճիկ ոճով պետք է լսեք, քան ազգային. ուստի խնդրեմ զգույշ եղեք ընտրության մեջ, մանավանդ ծանր եղանակների նկատմամբ, որքան կարելի է, խիստ եղեք. ամենից շատ ծանր ոճն է խանգարվել:

Գալով պ. Պոյաճյանի հավաքած ժողովրդական երգերին, եթե նոքա հավաքված են հայոց դուդուկներում և հենց գեղջուկի անարատ բերանից, հավանորեն ուղիղ կլինեն, թեև երգի արտասանությանը կասկածում եմ, իսկ եթե Թիֆլիզում կամ մի այլ քաղաքում է հավաքել, դոքա առանց կասկածի կասեմ, Կարա-Մուրզայի այլանդակված ժողովրդական երգեր անունը կրող բաներ են, որոնց զխիստ այնքան են սովել, որ խեղճ երգերն արդեն իրենց գույնն էլ, ազգային նշույլն էլ թողրել են, և ձևով ավելի շուտ մալաուտա ցեղի երգեր են դարձել, ճիշտ նույն ձևով էլ երգելու պատճառով, քան ազգային:

Այսքան երկար ու բարակ գրելուս պատճառն էլ այն է, որ մեր թե՛ եկեղեցական և թե՛ ժողովրդական երգերը դեռ նոր են ելնում եվրոպական բեմերի վերա, զեռ նոր ենք ծանոթացնում նոցա մեր զգացմունքի՝ վարքի-բարքի ճշգրիտ պատկեր տվող ազգային երգերին, ուստի շատ զգույշ պետք է լինել մի այսպիսի փափուկ խնդիր շոշափելուց:

Այս ամառն արդեն մի քանի ժողովրդական երգեր պետք է հրատարակեմ, ձեզի էլ կուղարկեմ:

Ձեր սկսած գործին կատարյալ հաջողություն մաղթելով և ողջունելով բարեկամներին

Մնամ Ձեր

Միշտ անձնվեր

Կոմիտաս վարդապետ

¹ Համբարձում Լիմեթյան, հայկական նոր նոտագրության ստեղծողը:

1904. հունվար 20

Ս. Էջմիածին

Խիբեյի բարեկամ

պ. Արշակ Չոպանյան.

Ներփակ նամակը նկույթյուն կրեք և հանձնեցեք Տ. Վռամշապուհին, նախ և առաջ կարդացեք և ապա տվեք: Ձեզ ես նույնը պետք է գրեի, ուստի չեմ կամենում երկարել խնդիրքս. ի սեր մեր եկեղեցու և Հայ Գեղջուկի երաժշտության պաշտոնական ո՛չ մի ջանք մի՛ խնայեք, ձեր ձեռքեն եկածն արեք: Դուք

արդեն քաջ գիտեք, թե ինչպիսի մեծ փրկություն է կախված մեր եղանակներն անաղարտ պահելուց և ժողովրդի ու իր եկեղեցու ազնիվ ու մաքուր սիրտը ճանաչելուց: Դուք, իմ Փարիզ եղած ժամանակ, ամենից շատ էիք ոգևորված այդ գործի հաջողությունը փափաղելով ի սրտե: Եթե կամենաք, Դուք կարող եք մեծ ծառայություն մատուցանել ոչ թե ինձ, Ձեր անձնվեր բարեկամին, այլ մեր ժողովրդին և մեր ազգային, նվիրական եկեղեցուն: Երկարելն ավելորդ է:

Հուսով եմ ստացած կլինեք ժողովրդական երգարանի Ա. հիսնյակը¹: Արդեն երկրորդն էլ պատրաստ է, շուտով կուղարկենք գրաքննիչին և սույն կտանք. պատրաստում ենք դիտական ժողովածուն հրատարակելու:

Ի միջի այլոց ասեմ, որ Ձեզ երգարանից առաջ ուղարկել էի երկու օրինակ, Ձեզ և հարգելի բարեկամ Օրբի² համար. երեկցավ, որ չեք ստացել. խնդրեմ անմիջապես հայտնեցեք այս երկրորդն ստացել եք, թե ոչ. հուսամ ստացած կլինեք, որովհետև այս անգամին ապահովյալ ուղարկեցի, որ անկորուստ Ձեր ձեռքն անցնի:

Խնդրեմ ողջունեցեք հատկապես պ. Օրբիին և այլ հարցանողաց:

Ձեր անձնվեր բարեկամ

Կոմիտաս

¹ Հազար ու մի խոց, ժողովրդական երգարան, խմբագրեցին Մ. Արեղյան և Կոմիտաս, Ա. հիսնյակ՝ 1903, Բ. հիսնյակ՝ 1905, Վաղարշապատ:

² Պիեռ Օրբի (1874—1910), ֆրանսիացի երաժշտագետ, պրոֆեսոր, Միջազգային երաժշտական ընկերության անդամ, գրադվել է գլխավորապես միջնադարյան երաժշտության ուսումնասիրության: Անձնապես ծանոթ լինելով Կոմիտասին, նա առաջարկել էր կազմել հայ ժողովրդական երգերի մի ժողովածու, բաղկացած 100 երգից: Կոմիտասը հաճությամբ էր հանձն առել և մտադիր էր այդ ժողովածուի մեջ ղեկավարել Հազար ու մի խոց-ի Ա. և Բ. հիսնյակներում եղած երգերի մեղեդիները՝ կցելով ընդարձակ մի ուսումնասիրություն հայ գյուղական երաժշտության մասին: Այդ կարևոր նախաձեռնությունը հետագայում խափանվեց, որովհետև Կոմիտասը չհամաձայնեց Օրբիի առաջարկած պայմաններին:

1904, 30/թ [դեկտեմբեր]

Ս. Էջմիածին

Սիրելի բարեկամ.

Ժամանակին ստացած էի Ձեր պատասխան դիրք և ներփակը, որպես և այսօր երկրորդ ներփակը. առաջինն անձամբ հանձնեցի Վեհին, իսկ երկրորդը ապահովագիր առաքեցի Տիպիս: Վեհն այժմ այնտեղ է և արդեն հասած է ձեռքը: Որքան ցավեցա, երբ լսեցի, որ անշուք կերպով եղավ Փարիզի հայ դպրոցի եկեղեցու բացումը. մի այնպիսի հարմար առիթ փախուցինք, որ շատ քիչ անգամ կպատահի. մի թե աչքսան կորել էր նախանձախնդրությունը ղեկի մի բազմաշարժար եկեղեցի, ղեկի մի նահատակ եկեղեցի մեր սերն ու կապը, որ նկատվեցավ, իբր թե մի նոր բնակարան են փոխում մարդիկ... Կա՛վ, լո՛ւնք:

Խնդրեմ եմ Արմենակիս (Շահմուրադին)¹ լավ խնամիր. նորա աչքն այստեղ էր. բայց իր վարժապետն ի՞նչ հարգ ունեցավ, որ աշակերտի աղերսը լսվեր...

Այս մեծ պասին, երեկ լսած կլինեք, մտադիր եմ Թիֆլիս գնալու և երկու մեծ համանվագերդ տալու զուտ հայ հոգևոր և աշխարհիկ երաժշտության, եթե չիափանվի. մարդոց վստահելը շատ դժվար է:

Գործերս հաջող են. այժմ կգրադվեմ հայ հին խաղերու ուսումնասիրության մը և հուսով եմ շուտով կարող պիտի լինիմ զաղտնիքը բանալ և գեթ ցժԳ դար եղանակներն ստուգել: Հրատարակելու կպատրաստեմ ժողովրդական եղանակները զաշնակի, խմբի և այլն համար:

Պ. Մագսուտյանին² հատկապես հիացմունքս և սրտիս անկեղծ ուրախութիւնը հայտնեցեր:

Ողջունեցեք Արմենակին և հարցանողաց:

Ձեր միշտ Կոմիտաս վարդապետ

¹ Երգիչ Արմենակ Շահմուրադյան:

² Դերասան, խաղացել է զերագանցապետ Քրանտահայ բեմում:

Սիրելի բարեկամ.

Պիտի դարմանաք, որ Տփլիսումն եմ. նյարդային հիվանդութիւն ստացա, եկել եմ բուժվելու. փառք աստծո, առայժմ լավ եմ, հուսով եմ մեկ ամսից բոլորովին կլավանամ:

Խնդրեմ թարգմանեցեք Հազար ու մի խաղի Ա. հիսնյակն ամբողջ, շուտով կուղարկեմ և երկրորդը, որ լույս է տեսել:

Լավ կլինե՞ր՝ թարգմանեք ոչ թե երգի հարմարեցնելով, տաղաչափութեամբ, այլ միայն արձակ, բովանդակութիւնը միայն տալով, որովհետեւ կըրկնակներն ու շատ կըճատ մտքեր արտահայտելն անհնար է ունի օտար լեզվով և նույնիսկ աննպատակ, քանի որ դիտական նշանակութիւն միայն ունին: Ձեզ անհասկանալի բառերն ու մտքերը խնդրեմ նշանակեք և ուղարկեք, անմիջապես կստանաք բացատրութիւնը: Ես թեև հիվանդ, բայց և այնպես պատրաստ եմ մեր ժողովրդական եղանակների կազմութեան ուսումնասիրութեանը, ժամանակին կհասցնեմ, անհող եղեք: Եթե կուզեք Ձեր թարգմանութիւնը երգելու հարմարեցնել, այն ժամանակ առաջնորդվելու է, որ երգերի վանկերի չափը, թիվը, շեշտը, մանավանդ կրկնակների իմաստը հիշտ հայերենի պես լինեն. որովհետեւ այդ շատ դժվար է, ուստի և ես մի քանի տող վերն ասացի, որ ավելի լավ կլիներ, եթե թարգմանվէր բոլորովին արձակ, տալով միայն հիշտ իմաստը: Այս մասին եթե ունեք ունի բան առարկելու, խնդրեմ, անմիջապես գրեցեք: Հառաջարանր կլինի շատ ընդարձակ՝ մանրակրկիտ բացատրութիւններով և փորագրութիւններով, սրպեսզի պարզ լինի մեր ժողովրդական երգերի ստեղծագործութեան եղանակը և հանգամանքը:

Հուսով եմ, պարզերես կլինեմ:

Առ այժմ այսքան:

Սիրալիր ողջուններով

Ձեր բարեկամ Կոմիտաս

Հ. Գ.— խնդրեմ օր. Մ. Բարսեղյանին¹ հայտնեք, որ ուղածը կուղարկեմ, երբ Մ. էջմիածին դառնամ, մոտս չկա:

Նույնը:

[Ծրարի վրա 4.10.05]

² Երգչուհի, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, Կոմիտասի աշակերտուհի, հետագայում Փարիզի Կոմիտասյան հանձնաժողովի նախագահ օրերը Մարգարիտ Բարսեղյան:

1906. 12/Ա. [հունվար]

Ս. էջմիածին

Սիրելի բարեկամ.

Այսօր ստացա Ձեր նամակը և անմիջապես կպատասխանեմ. հույս ունիմ, որ անվտանգ Ձեր ձեռքն անցնե, ասում են, որ ճանապարհները բացված է:

Այստեղ ամենայն ինչ անորոշ է և խիստ նեղ, թե՛ նիստ ու կացը, թե՛ կյանքը և թե՛ կայքը. նշաններ են երևում լավանալու: Ուղարկում եմ Հաղար ու մի խաղի Բ. հիսնյակը՝ մեկ Ձեզի, մեկը պ. Օրբիին՝ այցելո՞ւմսով: Գրում եք, որ առաջին հիսնյակի մեջ կան նույնիսկ ապուշ երգեր. կարծեմ թե բուն իմաստը լավ ըմբռնած չեք. բայց և շատ կիսնղրեմ, ուղարկեք անմիջապես ցանկը այն երգերի, որոնց տեղ կկամենայիք փոխել, Վանա կամ Մշո երգեր գետեղել. եթե իրոք անմիտ են և եղանակներն էլ ոչ կարևոր, դոցա փոխարեն ուրիշները կդնենք. անմիջապես զրկեցեք, որովհետև երգերի դասավորության ցանկը կազմելու եմ և ուղարկելու: Եղանակները կարտագրեմ, վերջացնելուս պես կուղարկեմ՝ ուսումնասիրությունն էլ հետը: Ինչու որ երգերը հավանեցաք, գրեցեք: Իրոք մեր երգարանին մեջ չէ նշանակված երգերի տեղերը, որովհետև ժողովրդական երգարանն է, ոչ թե դիտական, որ կպատրաստվի: Ուսումնասիրությանս մեջ մանրամասնաբար պետք է գրեմ այդ մասին: Կիսնղրեմ, եթե երկրորդ հիսնյակին մեջ էլ Ձեզ համար մութ բաներ կան, միասին նկատեցեք Ձեր նամակի մեջ, որ աչքի առաջ ունենամ և Ձեզի համար պարզեմ: Այնպիսի լուրջ հետևանքներ ստացա ուսումնասիրությանս միջոցին, որ միանգամայն պիտի զարմանաք, երբ կարդաք:

Երգերը այսպիսի կարգերի եմ բաժանել.

ա) Շինական (մշակություն, գործի և այլն)

բ) Ծիսական

գ) Վեպ (Դավիթ, Մհերի և այլն)

դ) Անտունի (պանդխտի, դարբերի)

ե) Վիպական—քնարական և

զ) Խաղ (երգեր, պարերգեր և այլն):

Եթե ավելի հարմար դասավորություն կամ բաժանում կարող եք, գրեցեք, ըստ այնմ էլ վարվեմ:

Շատ ողջուն Շահմուրադյանին, ըսեք, որ պատարագի արարողության զրկումը կուշանա, որովհետև մանր փոշտերը կանոնավոր չեն բռներ:

Ձեր միշտ բարեկամ

Կոմիտաս

Սիրելի բարեկամ.

Նրեի պիտի զարմանաք, երբ լսեք, թե ես այժմ Բեռլինումն եմ և արդեն երկրորդ օրն է. նույնպես պիտի ուրախանանք իրար վերստին տեսնելու համար: Ես զատիկից 10 օր առաջ ելա և եկա Բեռլին իմ աշխատություններս տպել տալու¹. արդեն Փարիզ զրկելիք աշխատությունս² էլ հետս էր, մաքուր արտադրած. բայց ի մեծ ցավ պետք է ասեմ, որ ճանապարհին փոքր պայուսակս դո-

դադան Ռոստովի մեջ. որովհետև ճանապարհները վտանգավոր են, գրեթե ի մահ, աչքիս լույս աշխատություններս գրել էի փոքր պայուսակին մեջ, իսկ սևագրությունները բազաժ էի տվել, մտածելով, որ եթե բազաժս կորչե, մաքուրը կփրկեմ. ես բազաժից էի հույսս կտրել, որ կկորչե, քանի որ երկաթուղիները շարունակ կկորցնեն թե՛ դրամ, թե՛ ասլրանք, բայց իմ բախտս, բազաժս ազատվեցավ, իսկ փոքր պայուսակս, որի մեջն էի գրել ձեզի գրվելիք աշխատությունս, երգերը և այստեղ տպագրվելիք երկերս, բոլորն էլ, բոլորն էլ գոռացան. անմիջապես հայտնեցի վարչության, տեսնենք կգտնեն: Բայց ես հույս չունեմ և սկսեցի նորից աշխատել այստեղ. լավ, որ զգալով թե մի բան կարող է պատահել, աշխատություններս սևագիրն էլ բազաժի էի տվել, դոնե նոքա փրկվեցան: 150 ոսկու էլ թղթադրամ կորցրի՝:

Դուք ողջ լինիք:

Ձեր Կոմիտաս վարդպ.

¹ Պոսթր «Հայ բնար»-ի հրատարակության մասին է, որը տպագրվել է 1907 թ. «Breitkopf und Hertel»-ի տպարանում:

² Ակնարկը վերաբերում է «Հայ պեղծուկ երաժշտություն» աշխատությանը, որն առաջին անգամ տպագրվել է Ա. Չոպանյանի «Անահիտ» ամսագրի 1907 թ. № 3—5-ի (էջ 70—73) և № 6—9-ի (էջ 127—130) մեջ:

³ Նամակի թվականը հայանի չէ:

Սիւրիի բաւեկամ.

Գրում եք, որ գարնան վերջին որոշված երեկույթը¹ մնաց աշնան. շատ էլ լավ է, եղև, որովհետև ես էլ կուզեմ մասնակցել. մի փառավոր բան անենք. ես դեռ աշնանն էլ այստեղ կլինեմ. իրավունքս տասն ամսով է:

Իմ գալուս ժամանակը դեպի Փարիզ չեմ կարող ձիշտ սահմանել, որովհետև ձեռքիս ունեցած գործերս մինչև չվերջացնեմ, չեմ կարող գուրս ելնել. նյութերն այստեղ են և պարտապալու էլ հարմար է այստեղ: Աշնան երեկույթի համար դուք էլ մտածեցեք, ես էլ կմտածեմ և մի գողտրիկ բան անենք, որ բանի նմանի:

Աշխատությունս արտագրությունը սպանում է ժամերս, մանավանդ ձայնագծերի արտագրությունը, որ շատ ծանր է առաջ գնում. ի՞նչ արած, բնկել ենք պիտի քաշենք:

Մանթաշյան² Փարիզ է: Խնդրեմ ողջունեցեք Տ. Վառժապուհին, Շահմուրադյանին և հարցնուլաց:

Ձեր միշտ անձնվեր

Կոմիտաս

1906. 26 Դեկտեմբերի Բեռլին.

¹ Ակնարկում է այն երեկույթը, որը նվիրված էր հայկական երաժշտության ցուցադրմանը և տեղի ունեցավ 1906 թվականի դեկտեմբերի 1-ին Փարիզում՝ Կոմիտասի մասնակցությամբ, և ունեցավ բացառիկ հաջողություն:

² Հայ խոշոր կապիտալիստ Ալեքսանդր Մանթաշյանը, որը կաթողիկոս Խրիմյանի միջնորդությամբ Կոմիտասին նշանակեց թուշակ՝ Բեռլինի կոնսերվատորիայում սովորելու տարիներին:

1906. 27/ե [մայիս], Բեռլին.

Սիրելի բարեկամ.

Երեկոյթի¹ լեհ դադափարն ինձ այնպես է ոգևորել, որ գրչով արտահայտել չեմ կարող. մի բազմակողմանի բան անենք, ուր երևա հայի մտածող և գրացող ոգին: Ես այսպես եմ մտածել: Որպեսզի հայ երաժշտությունը լավ ըմբռնեն, նախքան երեկոյթը կազմելը մի դասախոսություն անել հայ ժողովրդական երաժշտության մասին ընդհանրապես և մասնավորապես էլ եղանակների կազմության մասին, ապա նույնը՝ ժողովրդական երաժշտությունը ցույց տալ արդի գեղարվեստական միջոցներով բազմաձայնի վերածած:

Սկզբնական դասախոսության միտքն այն է, որ նախապատրաստված լինեն եղանակներն ավելի ճիշտ ու հեշտ ըմբռնելու համար:

Մեծ հույս ունիմ մեր բարեկամ, սիրելի Օրբիի վերա, որ մեղ կաջակցե երեկոյթը լրիվ անելու համար:

Ես ուզում եմ այժմն իսկ կամաց կամաց նախապատրաստել զանազան տեսակի երգեր, զանազան տեսակի ոճով, բայց նախ պետք է մոտավորապես իմանամ՝ ի՞նչպիսի խումբ ենք ունենալու, քանի հոգուց բաղկացած, ի՞նչ պատրաստության տեղ են և այլն, որ ըստ այնմ էլ աշխատեմ երգերը բաղմաձայնելիս և մանավանդ ընտրելիս: Արդեն շատ բան պատրաստի ունիմ, գուցե և դոքա հարմարվեն, բայց նախ խմբի մասին մի որոշ գաղափար պետք է ունենամ: Ախ, ի՞նչ լավ կլինեք եթե մի ֆրանսական կիրթ խումբ ունենայինք ձեռքի տակ, որպեսզի հեշտ և փառավոր ներկայացնեինք մեռ ժողովրդի սքանչելի երաժշտությունը:

Սիրելի՛ բարեկամ, կիսնդրերի Ձեր ցանկացած երգերի ցանկն ստանալ, որո՞նք կուզեք, որ հրատարակության մեջ մտնեն Յ.կնա երգերից. որովհետև, այն ժամանակ, ուսումնասիրության մեջ կարիք կլինի և նոցա մասին խոսելու, ուստի, քանի՜ դեռ չեմ վերջացրել, ուղարկեցեք անվանական ցանկը երգերի, կամ նոցա համարները ըստ «Շարի»:

Երգերի արտագրելը հոգիս հանեց, առանց արտագրելու էլ ուսումնասիրությանը չեմ կարող ձեռք վարեն, մինչև որ ձեռքիս տակ մաքուր և դասակարգած օրինակները չունենամ:

Սիրալիք բարեկամ Ձեզ

Մնամ Ձեր բարեկամ

Կոմիտաս

¹ Տե՛ս նախորդ նամակի ծանոթագրությունը.

Սիրելի բարեկամ.

Ուղարկում եմ այսօր նամակիս հետ միաժամանակ հայ գեղջուկ երաժշտության ուսումնասիրության առաջին տետրը, սկսեցեք կամաց կամաց թարգմանել, ես էլ կհասցնեմ մյուսները տետրակ տետրակ: Ուղարկեցեք թարգմանած ժողովրդական երգերից հետեյալների ֆրանսերենը, որ տպել պետք է տամ բազմաձայն և միաձայն՝ դաշնակի նվագով, այստեղ գերմաներեն էլ թարգմանել տվի մի հմուտ բանաստեղծի. ուսուցչապետս խորհուրդ է տալիս հայե-

րեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով տպել տալ, որ օտարներին մեր եղանակները շուտ բմբռնել տալու գործը ղյուրացրած լինենք:

1. Հարրբան, 2. Գարուն ա, ձյուն ա արել, 3. Չինար ես կեռանալ մի, 4. Անձրեն եկավ, 5. Սարերի վրով գնաց և 6. էս գիշեր լուսը տեսա: Մի քանի երաժշտական բառերի նշանակությունն էլ կցում եմ նամակիս, որ ձեր գործը հեշտացնե, բայց ցավոք պետք է ասեմ, որ համապատասխան ֆրանսերեն երաժշտական բառերը չգիտենալով, գերմաներենը գրեցի. հուսով եմ, դուք կարող եք բմբռնել կամ պ. Օբրիին հարցնել: Մի բան էլ. շատ բառեր ինքս եմ հորինած, որովհետև երաժշտական լեզուն մեր մեջ գեռ նոր պետք է կարգանա. կարծեմ հաջող կհամարեք: Բառի մոտի թիվը տետրակի երեսն է նշանակում:

1. Երգական—vokal. 3. Խաղ—ժողովուրդն իր հորինած երգերին այս անունն է տալիս, իսկ դրական երգերին ասում է՝ տաղ: 7. Նվագական—instrumental (նվագարանների անունը պահել և գրել ֆրանսերեն տառադարձությամբ, որովհետև եվրոպական չեն): 8. Ձայնոց—նվագարանի բերանի այն մասը, որ առանձին կտոր է և ձայնը գորտնով են հանում, որ լինում է եղեգնից կամ ոսկեպղնձից: 9. Փակույթ (փական, փակոց)—klappe. 11. Լարվածք—stimmung. 11. Ձայնաշար—skala—սանդուխ: 11. Կիսական—chromatisch. 11. Ամբողջական—diatonisch. 12. Ությակ—octave. 15. Հնգյակ—quinte. 15. Բնափող—naturhorn. 16. Եռյակ—terz. 19. Դողդող—tremolo. 21. Նվագ—նվագարանների եղանակը, իսկ երգ՝ միայն մարդկային ձայնի և լեզվի եղանակը: 23 Նվագուրդ—orchester. 25. Մենանվագ—solospiel. 27. Նվագերգական—instrumentalvokal. 27. Միակ—unissono կամ prime. 28. Ձայնառություն—orgelpunkt. 30. Մեներգ—sologesang. 35. Տառախաղություն—օրինակ, պետք է ասել՝ քահանային—ասում է —քահ-հա-ա-նա-յին կամ՝ տայ—ասում է — տավայ և այլն: 38. Կապել—հյուսել: 43. Թելլո—անուն է:

Աշխատությունյան վերնագիրը դիտմամբ «Հայ զեղչուկ երաժշտություն» դրի, որովհետև քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել, իսկ ժողովրդական բառը շատ բնահանուր է և բնագրկում է բոլորին, այնինչ այս երգերը հատկապես գեղջուկի ստեղծագործություններն են. իսկ աշխատության մեջ ժողովրդական բառը գործածել եմ, որովհետև գրագետներն ու կրթված գասակարգը սովորել է այդ անունը տալ, մանավանդ, երբ երգի հետն միացած, գյուղական ժողովրդին: Աշխատությունս էլ նվիրեցի պ. Ա. Մանթաշյանին, որովհետև նորան եմ պարտական արդի ուսման պաշարովս՝ եվրոպական մտքով:

Բովանդակության ցանկը կուղարկեմ վերջին տետրակի հետ, որի համար տեղ եմ թողել սկզբից:

Այստեղ բնությունն անձրեային է և խիստ անառողջ:

Համերգի և դասախոսության մասին մանրամասն կխորհրդակցենք սեպտեմբերին: Ես արդեն այնպես եմ դասավորել իմ աշխատանքներս, որ սեպտեմբերի սկզբներին կարող կլինեմ Ձեզ վերստին տեսնելով ուրախանալ:

Մաղթելով Ձեզ քաջողջություն,

Մնամ Ձեզ շատ սիրալիր բարեկեղծ

Կոմիտաս

Բեռլին. 17/8 [օգոստոսի]

[1906]

Սիրելի Արշակ.

Ժնև մեկ օր մնացի. ճաշեցի Մելիք Հայկազյանների¹ մոտ, շատ բարև արին քեզ: Քեզ հայտնի խումբը չարախոսել է տիկին Մելիք Հայկազյանների մոտ. սաստիկ վրդովվել էին և մայրիկը մի լավ լվացել է բոլորին, սկսած Մալումյանից², որոնք նախանձելով քո արդյունավետ և տոկուն գործունեության, ինքյանք չեն կարողանում ուրիշ կերպ անել, բայց եթե բամբասել այստեղ-այնտեղ: Տիկինը պատմեց, որ շատ նեղն է դրել նոցա և ինչպես ինքն ասաց, «միայն նախանձից շարժված են անում և իրանց դիմակը բաց անում» և որպես ասացին, Մալումյանին դուր չէ եկել, որ մայրիկն ու աղջիկները շատ են ոգևորվել քեզանով, ուստի երկար ժամանակյա բարեկամությունն անգամ խզել են մայրիկի հետ. իսկ այդ աննման կիսն էլ ասում էր, որ այս առիթ է եղել նոցա ներքին թունավոր և նախանձով լի սրտերը քննելու և ճանաչելու. «Ինչ էլ ասեն, ասում էր մայրիկը, չեն կարող այն ուղիղ համոզումը, որ ունիմ պ. Արշակ Չոպանյանի մասին ինձնից խել, լավ եղավ, որ իրանց էլ ճանաչեցի»: Ասում էր, որ քո գրվածքներն ու քո մասին գրվածները մի քանի անգամ կարդացել է և հիացել: Այս այսպես:

Ժնևում ուսանողներից ոչ ոք չկա. գնացել են ամառանոց. նույնպես Լոգանում ոչ ոքի չգտա. պ. Կոստանյանին³ էլ չգտա, որովհետև հասցեն իմացող Քաջբերունի ուսանողը գնացել էր: Մի գիշեր մնացի Լոգանում Նալբանդյանների⁴ տանը, լավ հյուրասիրեցին, նվագեցինք, երգեցինք. այսօր երկրորդ օրն է Փարիզումն եմ: Հա, Ժնևում Շերիճյանին⁵ տեսա, ճաշի պահեցին, շատ ուրախացան և քեզ բարևում են. նոքա էլ ամառանոց գնացին արդեն: Կարող ես երևակայել, որ Շերիճյանների թուփակի իմ շինարի յարն է շվացնում, վարմացած մնացի. անմեղ բնական երգն ըմբռնում են նույնիսկ թոշոնները: Ֆավրը⁶ գնացել է ամառանոց: Երգարաններն ուղարկել է Demets⁷ վենետիկ. բաց արա և մի օրինակ վանքի մատենադարանին և մի օրինակ դպրոցի մատենադարանին գրե իմ կողմից, իսկ մնացածներից տասն օրինակ Իշխանին⁸ ուղարկել տուր, եթե քեզ նեղություն չէ բոլորն էլ միջակ թղթի վրա տպածներիցը լինեն. լավ թղթի (ճափոնական թղթի) վերա տպածից, որ տասն օրինակ է, մեկը Իշխանին առանձնապես նվիրե իմ կողմից, այնպես որ Իշխանին ուղարկելիքը 11 օրինակ կլինի, գրե, որ վճարքը չուղարկե, ես նորան առանձին կգրեմ, երբ և ուր ուղարկելիքը:

Մնացած օրինակները ետ ուղարկե շուտով, որովհետև այստեղ կազմած և պատրաստ ուրիշ օրինակ չկա, դեռ բոլորն ստացված չէ: Ասել չուզեր, որ, եթե քեզ հարկավոր է, քանի օրինակ կուզես, որ տեսակեն կուզես, լավ կամ միջակ թղթի վերա տպած, կարող ես առնել: Խնդրում եմ մնացածն ուղարկիր, որ կարևոր տեղեր ուղարկեմ անմիջապես: Հովակիմյանները⁹ շատ բարևում են քեզ. Արմենակին¹⁰ տեսա, շատ բարև է անում, իսկ Իփեկյանին¹¹ դեռ չեմ հանդիպել: Խեղճ Մուղունյանը¹², քեզ երկար արև, վախճանվել և թաղվել է մեկ շաբաթ առաջ. սաստիկ ցավ պաաճառեց, մի քանի գեղարվեստագետ ունենք, նոքա էլ վաղաժամ թաղամում են և հրապարակը պարապ թողնում: Թե՛ վանքի և թե՛ դպրոցի միաբան եղբայրներին հատկապես բարևներս հիշե, շուտով նոցա էլ կգրեմ: Մելիքյանը Բաքու է գնացել, որովհետև հեռագիր է ստացել, թե եղբոր դեմ հրազեն են պարպել և սպանել փորձել իր գործարանի

ծառայողները. այնպես որ մինչև նա չգա, ես նորան այցելության չեմ կարող գնալ: Շատ բարե նույնպես պ. Նորայրին:

Կարոտով և սիրով քեզ համբույրներ
Քո Կոմիտաս.

[Ծրարի վրա՝ 21. 12. 07, Փարիզ]

- ¹ Հավանաբար ակնարկում է իրավարան Մելիք-Հալիպյանի ընտանիքը:
- ² Դաշնակցության պարագլուխներից մեկը:
- ³ Կոստանյան Կարապետ—պատմաբան, բանասեր, մի ժամանակ Էջմիածնի Գեորգյան ձեռնարանի աեսուչ:
- ⁴ Ակնարկում է հայտնի աստղաբաշխ, հետազոտում Կ. Պոլսի կենտրոնական վարժարանի տեսուչ Մարտիրոս Նալբանդյանի ընտանիքը:
- ⁵ Հավանաբար ժնեի փոքրաթիվ հայ գաղութի ներկայացուցիչներից:
- ⁶ Ֆավր—ծածկանուն մեկ անհայտ անձնավորություն:
- ⁷ Հրատարակչություն:
- ⁸ Կոմիտասի բարեկամներից, մեկ անհայտ անձնավորություն:
- ⁹ Մեզ անհայտ ընտանիք:
- ¹⁰ Երգիչ Արմենակ Շահմուրադյան:
- ¹¹ Հավանաբար ակնարկում է հասարակական գործիչ Գառնար Իփեկյանին:
- ¹² Հիանալի ձայնով օժտված երգիչ, որը վախճանվեց երիտասարդ հասակում:

Սիրելի Արշակ.

Վաղուց է քեզ նամակ չեմ դրել: Այս տարին վերջացավ: Ես գոհ եմ ինձանից. այս տարի տվել եմ հինգ համերգ և դասախոսել եմ վեց անգամ: Պատրաստել եմ և սկսել հայ գեղջուկ քնարի միաձայն հրատարակության տասնյակներով դպրոցների և առօրյա գործածության համար: Պատրաստել եմ դաշնակի համար բավական երգ: Խաղերի ուսումնասիրությունն առաջ եմ տարել և աշակերտներիս պատրաստել: Անդրանիկ աշակերտս՝ Ստեփան¹ սարկավազն արդեն ավարտեց Բեռլինում և օգոստոսին կգա Ս. Էջմիածին:

Այս տարի ամառանոց գնալ չեմ կարող. արտագրելու բաներ շատ ունիմ, բայց պետք է ասեմ, որ եղանակները զուրկ են այստեղ էլ:

Քո չզալղ մեզ շատ տխրեցրեց. ես և ընկերներս անհամբեր սպասում էինք զալուդ. դու անշնորհք ես, ուզենալիք, կարող էիր զալ. այնպես ես սովորել Փարիզին, որ չես կարողանում բաժանվել: Գիտես թե քեզ համար որքան արդյունավետ կարող էր լինել զալդ. իզուր չեկար, ինչ և իցե, ինչպես տեսնում եմ, ես ավելի շուտով Փարիզ կգամ, քան դու այստեղ, և քեզ քաշ տալով կրեքենք այստեղ, որ դուն ժողովրդին իր բնիկ երկրում ճանաչես:

Այժմ հանգամանքները լավանում են, ժողովուրդը սթափվել է և լուրջ կերպով ուսման հետևիցն է գնում, որ միակ փրկությունն է մեր և ապագա կյանքի պատվանդանը:

Երեկ ամառանոց գնացած կլինես, մեր բարեկամներին, Ուիո-ին² և մյուսներին անշուշտ կտեսնես և շատ կբարեկես:

Նույնպես սիրալիր բարեկես իհարկե, երբ տեսնես, մեր Շահմուրադին, Կեվլեքներին և մանավանդ Հովակիմյաններին և մեր սեղանակիցներին, առանձնապես Երվանդ Մանվելյանին³ և քեզ:

Այսօր Մելիքյանին էլ մի նամակ գրեցի:

Շատ սիրալիր բարևներ
Համբույրներով քոյդ

Կոմիտաս

[Ժրարի վրա՝ 5.2.08]

¹ Սպիրիդոն Մելիքյանի հոգեւոր անունն է:

² Մեզ անհայտ անձնավորութիւն.

³ Կոմիտասի բարեկամներից:

1909. 15/7 [ապրիլ]

Ս. Էջմիածին

Սիրելի Արշակ.

Նամակներդ ստացել եմ. օր ավուր սպասում եմ, որ եղանակները բացվեն՝ անձրևներ են շարունակ, որպեսզի մնացած երկու նկարն ևս առնել տամ Գալանեի վանքում, ապա քեզ կուղարկեմ 80 նկար. հուսով եմ գոհ պիտի լինես: Ինչ կվերաբերի Հ. Գարեգինի լուսանկարելիքներին շատ կամայական իռլենդոտների հետ են կապված, զի ուղտը¹ մի շարք պատրվակներ է առաջ բերում: Ես խորհուրդ եմ տալիս առ այժմ այդ մասը թող մնա ցղալուստ Վեհափառի և ամեն բան կարգ ու կանոնով առաջ կերթա:

Անցյալ շաբաթ ստացա Կ. Պոլսից քո անունով մի դրամաբեր գիր, Վահագն ստորագրութեամբ, 30 ռուբլի թղթադրամ ներփակ դրած. «Սիրելի ա. Արշակ Չոպանյան, հակառակ մի չորս անգամ փնտրելուս, չկրցա Ձեզ դտնել վճարելու համար այն չորս դադ. ոսկին զոր մեր ընկերները ստացել էին Ձեզմե: Այժմ ներփակ կգտնեք ի փոխարեն չորս (4) նաբոլիոնի — երեսուն ռուբլի (30): Ստանալդ իմացուր... Վահագն»:

Այս 30 ռուբլի դրամը պահեցի մոտս, որ մնացած ծախսերդ հոգամ լուսանկարների համար:

Այժմ գանք այն բանին, թե ինչեր են կատարում այստեղ տեղապահ² ու տղտր և իր զոլ արբանյակ Հուսիկ արքեպիսկոպոսն³ ու իր ընկերները: Ինչ որ լրագրերի մեջ կարդացել ես, բոլորն էլ ճիշտ են մեր նկատմամբ: Սուրենյանն² ու իր ընկերությունը սրռել են ինչ էլ որ լինի մինչև Վեհի գալուստը ամեն բան տակնուվրա անել: Բերբերյան⁴, Հ. Գարեգին⁵, Երվանդ⁶, Հուսիկ⁷ և Կոմիտաս վարդապետներին վարկարեկել զգվելի ստախոսություններով, աշակերտներին հուզելով, անլսելի վրպարտություններ բարդելով, գիտեն, որ գուցե իրանց օրը մտել է, կեղտերը մեկ մեկ երևան են ելնում, ուստի և վրեժ են առնել ուզում: Իրավ է, ես հրաժարվեցա ուղիղ մեկ ամիս. հետո տեղապահն իր խոսքն ու գիրը հետ առավ և ես խաղաղությունը պահպանելու համար հանձն առա նորից ընդունելու ընդհատված պաշտոնս, բայց այժմ էլ աշակերտների միջից որսացել են մի խումբ կամակատարներ և դադտնի վրդովում են ճեմարանի կյանքը: Ափսոս, շուտ գնացիր, ես կուզեի, հատկապես այս երևույթներին դու ինքդ ականատես լինելիր, և ըմբռնել կարողանայիր, թե ինչո՞ւ էինք մենք ցանկանում որ Իզմիրլյան⁸ Կ. Պոլիս, իսկ Որմանյան⁹ Էջմիածին լիներ:

Մենք այժմ ավելի ենք համոզվել և մաքուր ենք մեր խղճի առաջ, որ բոլոր խոսքերը զրպարտություններ են Օրմանյանի դեմ, եթե չէ, ինչու չէ քննում ազգային ժողովը նորա հաշիվները, չէ՞ որ այդ քննությունը իրանց վարմունքը կամ պետք է արդարացնե, կամ պետք է դատապարտե: Կարծեմ վերջինն է ճիշտը, որ խույս են տալիս ամեն կերպ օրինավորությունից, ուրիշ ո՞չ մի հակառակ բացատրություն չենք կարողանում գտնել: Մենք այժմ պարզ տեսնում ենք, որ պատրիարքարանն¹⁰ ապիկար մարդոց ձեռքն է ընկնելու Իզմիրլյանի հեռանալով, իսկ Օրմանյանին վարկաբեկեցին ի տարապարտուց, նա այժմ իմ աչքում իսկ որ արդարության քաղցրության նոխազ եղավ: Լավ կարդա այժմ այն, ինչ քեզ պիտի գրեմ, մեկ օր քեզ պիտի հիշեցնեմ այս խոսքերը: Այստեղ Իզմիրլյանին պիտի վարկաբեկեն հենց այն անձինք, որոնք երեսանց, իբր թե, նորա ջերմ պաշտպաններն էին: Այս լավ հիշիր: Մեկ էլ իմացիր, որ անասելի դժվարությանց պիտի հանգիսե կառավարության կողմից. նորից զարթնելու են դպրոցական և կալվածական խնդիրները և այս անգամ ընդմիջտ քնելու պայմանով: Տերությունը վճռել է, ինչ որ լինի, ջնջել դաշնակցություն կոչված հաստատությունը և տասնյակներով բռնում են արդեն ամեն գյուղում. այժմ այստեղ են, մի քանիսին տարել են բերդ, դեռ մի 60—70 հոգու բռնելու են, այսպես և մյուս գյուղերումն են վարվում: Ժողովուրդը կարծես ուրախ է, որ մի անկոչ հարկահանի ձեռքից ու կամայականություններիցն ազատվում է. ոչ մի ցավ, ոչ մի վիշտ չէ արտահայտում այս առթիվ:

Համերգս ջուրն ընկավ, դի ճեմարանում խառնաշփոթություն ստեղծեցին, որպես վերը նկարագրեցի: Հոգևոր համերգի¹¹ մեջ բոլորին գերազանցեցինք հայերս, թեև ինձ սաստիկ թուլացրին երկար ու ձիգ, անցանկալի պարապմունքները: Կարող ես երևակայել, որ մեր հայ բաժինը պատրաստեցի մեկ օրվան մեջ 14 ժամ զբաղվելով Ներսիսյան դպրոցի խմբի հետ, որոնք բերան բանալ անգամ չգիտեին: Վերջին ըոպեին հեռագրով կանչեցին, իբր թե խումբը պատրաստ է և ես միայն կառավարելու եմ, դի վարժապետը հիվանդացել է: Գնացի, տեսա, որ ոչինչ չեն արել, հոգիս բերանս հասավ պատրաստելու համար: Նյարդերս խիստ լարվել են, աշխատանքներս մասամբ ընդհատել եմ, դեռ ցարդ հիվանդի պես եմ, սպասում եմ Վեհի գալստյան, որ հայրենիքս զնամ մի քանի ամիս ջերմուկներում հանգստանամ:

Պետք է ասեմ, որ այստեղ կատարյալ հուսահատություն է տիրում վանքում մեր շրջանի մեջ: Հաստատության հեռագրական լուրն ստացանք, բայց տակավին սլաշտոնական հրովարտակը չէ եկել. երբ ստանանք այն ժամանակ կերթան պատվիրակները Կ. Պոլիս: Եթե ինձ ևս վիճակվի զնալը, որ դեռ չեմ հավատում, Իզմիրլյանին առանձին խոստովանություն և մի շարք կարևոր մերկացումներ եմ անելու, որ նա իր անելիքն իմանա այստեղ. ցավում եմ, որ այս մեծ և կարևոր հաստատությունն անարդանքի առարկա է դարձել հասարակության համար: Շատ կարող է պատահել նույնիսկ, որ մի խումբ, և այն ստվար և կարող միաբաններ, չգիմանալով հալածանքների՝ հեռանան վանքից: Եթե Իզմիրլյանը գալուն պես մանրամասն հաշվետվության ենթարկե ազգային, եկեղեցական և հայրապետական իրավունքները ոտքի տակ տվող Սուրենյանին, այն ժամանակ նա ավելի ևս անզգամ պիտի լինի և ստեղծվի Վեհի և նորա մեջ մի սաստիկ կռիվ: Վեհը եկեղեցու և ազգի շահերը պաշտպանելու համար պիտի մատնվի նորա ձեռքով՝ իբր կառավարության շահերը սլաշտպանող և կարող ես գուշակել թե ինչեր կարող են առաջ դալ. առնվազն իշխանության և

Վեհի հարաբերությունաց խղումն, որ համապոր է Մայր Աթոռի վերջնական կամ վերջընթեր կործանման: Աստված տա, որ ես սխալ լինիմ, ամեն բան թող ի բարին փոխվի:

Այժմ ամեն մի, նույնիսկ հիմար մարդ կարող է տեսնել, որ արդար ճանապարհով չէ կարողանում վնասել մեզ Տեղապա՛հը, ուստի աշխատում է, որ մեզ համբերությունից հանե կամ ուրիշ կողմնակի միջոցներով մեզ հալածե:

Այս ձմեռվան աշխատանքներս խիստ արդյունավետ եղան. գտա հայոց հին խաղերի բանալին և սկսա կարդալ պարզ եղանակները: Այս ամռան ուզում եմ մի քանի շաբաթով նախքան հայրենիք գնալս անցնել նորուստեմ և մի քանի կարևոր ձեռագրեր ևս ուսումնասիրել, որ գործն շտապով առաջ տանեմ: Հետո մանրամասնաբար քեզ կհաղորդեմ:

Հավ է այսքանով գոցեմ գիրս. սիրտս լցված է. եթե չամաչեմ լաց լինելու ցավերս շատացել են: Տես աչքովդ, թե ինչպես մարդիկ ավերում, կործանում են պատիվ, անուն, եկեղեցի, սրբություն, ազգայնություն և ինչպես գործիք են դառնում չարի ձեռին և ապա մի՛ լցվիր, մի՛ լար, մի՛ ողբա հորենացու պես, իր իսկ ողբով. այժմ նույն պատկերն է մեր շուրջը և նորա ուրվականն է ողբում մեր անբուժելի ցավերը:

Խնդրեմ ներփակ երգը Շահմուրադին հանձնե. ասա, թող չնեղանա, որ չեմ կարողանում իր ուղածները հասցնել. անհրաժեշտ և անհետաձգելի գործեր և ապա այս դժոխային մեքենայությունները սիրտս ու միտքս հանգիստ չեն թողնում, որ կարողանամ ստեղծել:

Նորա հառաջադիմությունն ինձ անչափ մխիթարում է, ամեն մի լուր կարդալիս սաստիկ հուզվում և լալիս եմ. նյարդերս հանգիստ չեն, առհասարակ զրույցներս ընդհատել եմ բժշկի խորհրդով: Շատ սիրով և կարոտով բարևե իրան և հանձնիր այս երգը: Ուրիշին չտա արտագրելու, բացի Բաբայաններից, եթե ուզեն:

Սիրալիր բարևներս հաղորդե մեր բարեկամներին, մանավանդ իմ սիրելի Հովակիմյան բնտանիքին: Մանվելյան Նրվանդին, Շուժենին, Փոլարին, Գևորգին, Գարիբին¹² և ընկերության չեմ բարևներս:

Անհոգ եղիր, պատկերները շուտով կուղարկեմ:

Սիրալիր համբույրներով Քույր Կոմիտաս

¹ Մեսրոպ վարդապետ (ապա եպիսկոպոս), Կոմիտասին հետապնդողներից և հալածողներից մեկը:

² Կաթողիկոս Խրիմյանից հետո նշանակված տեղապահ արքեպիսկոպոս Սուրենյանը:

³ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսեսյան, Բեսարարիայի նախկին հոգևոր առաջնորդ: Կոմիտասը նրան ղող է անվանել եկեղեցական գումարների յուրացման կապակցությամբ:

⁴ Բերբերյան Մինաս, Կոստանյանից հետո Գևորգյան ճեմարանի տեսուչ:

⁵ Հ. Գարեգին Հովսեփյան, հեղինակ մի շարք արժեքավոր ուսումնասիրությունների հայ մանրանկարչության և քանդակագործության մասին: Հետագայում Մեծի տանն էիլիկիո կաթողիկոս:

⁶ Երվանդ վարդ., այժմ պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյան:

⁷ Հուսիկ վարդապետ Զոհրաբյան, Կոմիտասի ընկերներից, հետագայում առաջնորդ Ռումինյան:

⁸ Իգմիրյան Մաթեոս, Պոլսի պատրիարք, հետագայում կաթողիկոս ամենայն հայոց:

⁹ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, հայտնի պատմաբան, «Ազգապատում» արժեքավոր աշխատության հեղինակ, եղել է Կ. Պոլսի պատրիարք առաջին համաշխարհային պատերազմից առաջ:

¹⁰ Կ. Պոլսի պատրիարքարան:

¹¹ Թիֆլիսում տեղի ունեցած հոգևոր համերգի մասին է.

¹² Կոմիտասի անձնական ծանոթներն ու բարեկամները:

1909. 14 հուլիս

Ս. Էջմիածին

Սիրելի Արշակ.

Հակառակ իմ շտապելուն, լուսանկարների առաքումն ուշացավ. պատճառները գրել էի անցյալ նամակովս: Այս թղթատարով ուղարկելու եմ ինձի հանձնըված բաժինը. հայր Գարեգինն էլ շուտով ուղարկելու է. նորա բանն էլ այժմ դյուրացավ. անցյալ օրը Վեհը կանչեց ուղտին և հրամայեց ամեն դյուրությամբ տալ. խոնարհեցավ և «շատ բարի» ասաց, թեև արդեն դժգոհ էր, երևի մտածում էր, ամեն բան ինքն անե, աչքի իյնա...

Վեհափառը շատ նպաստավոր տպավորություն թողեց բոլորիս վերաբայց մեր ուղտն էլ առաջվան պես գլուխ չէ կտրում, երևի նորա համար, որ Վեհը Սուրենյանի պես իր խոսքով նստող ելնող չը դուրս եկավ. արդեն խուլ բամբասանք է սկսել: Վեհը գալուն պես գործի գլուխն անցավ, բայց դեռ ոչ ի պաշտոնե, դի օծումն ընդունելուց հետո է շարժելու իր գավաղանը, որ նույնպես ուրախալի երևույթ է. Մկրտչի պես դեռ չօծված հայրապետական ոչ մի հրաման չի արձակում, առ այժմ նախապատրաստվում է: Անցյալները կանչեց ինձ և երկար խոսեցինք. կանչեց նույնպես Երվանդին ու Հուսիկին, որոնց վերա նույնպես լավ տպավորություն է թողել և որ գլխավորն է Վեհը գրեթե ըստ ամենայնի մեզ համախորհուրդ է իր ծրագիրներով՝ առանց չափազանցությունաց մեջ ընկնելու, որ և կարևորն է: Օծումը նշանակված է օգոստոսի 23-ին՝ իր աքսորանքի գնալու օրը: Ամսիս 11-ին տարանք Բյուրականի ամառանոցը: Այստեղ անտանելի տոթեր են:

Ամսիս 10-ին Վեհին այց եկավ Երևանի նահանգապետը՝ նախապես հեռագրով ունկնդրության ժամ խնդրելով: Պետք է ասել, որ Հայրապետական փառքն սկսել է աճել, թե յաչս ժողովրդական և թե յաչս կառավարության, որ դգալի կերպով սկսել է նախկին մեծարանքները տալը, մեծարանքներ, որոնք 17 տարի է, որ ապիկար նրիմյանի ձեռքով արհամարհանքի ու ծաղրի էին փոխվել. այս առթիվ ամենքն էլ գոհ են: Երևի քաղաքականությունն էլ կփոխվի. արդեն նշանները կան. սկսեցին բանտարկյալներին արձակել և այլևս չկալանավորել, բացի հայտնի հանցագործները:

Ինչնակցական խմբակը, որ առամները թափած է, խիստ դժգոհ է Վեհից, բայց չեն համարձակվում հրապարակ ելնելու: Էլ բավ է, որքան քանդեցին մեր ներքին և արտաքին կյանքը՝ անմիտ հպարտությամբ և փուշ ուժով: Սիբան մեզ խիստ ուրախացնում է, որ մեր հայերը Տաճկաստանում արդեն լավ և շուտ ըմբռնեցին այդ կուսակցությունների կործանիչ և ավերիչ ուղղությունները և թոթափեցին կամ թոթափելու ջանքեր են անում, որ մի ապիկար խնամակալություն չավելանա:

Երևի օծումից հետո կերթամ Պոլիս և հայրենիք, Վեհին խնդրեցի և հաճեցավ խոսք տալու. եթե հարմար լինի, մի քանի օրով կանցնեմ ձեր կողմերը և ապա Բեռլինի վերադառնալով կգառնամ Ս. Էջմիածին:

Հարցանողաց բարևներս:

Սիրալիր համբույրներով

Քույր Կոմիտաս:

1909 ՅՈՒՆԻՍԿՈՒՄԻ]

Ս. Էջմիածին

Սիրելի Աշակ.

Նամակներդ ստացել եմ, շատ ուրախ եմ, որ գոնե երկար տանջվելուց հետո, քեզ առողջ ես զգում. զգույշ եղիր, սիրելիս, էլ մի հիվանդանար: Պատկերներն արդեն ստացած կլինես՝ անցյալներն ուղարկել տվի Հայր Գարեգինի պատրաստել տվածներն էլ: Ինչ վերաբերում է Ղազարու Հարություն և մյուս նկարներին, ցավելով եմ արձանագրում, որ անհայտացել են, մեջտեղը չեն երևում. ասում են, որ հանգուցյալ Հայրապետը բաժանել է գյուղական եկեղեցիներին, բայց ո՞ր եկեղեցիներին, չենք իմանում. եթե գտնեմ, անմիջապես բերել կտամ այստեղ, անհոգ եղիր:

Երեկ վերադարձա Տփլիսից. գնացել էի տիկին Մանթաշյանի՝ թաղման:

Սիրելի բարեկամս, այժմ արդեն պարզ է, որոշ չափով, որ մեր նոր Վեհչր ընկած է գաշակցության ձեռքը. Սիրական Տիգրանյանը², որ Հորիզոն լիերթի խմբագիրն էր, բերել տվին Ս. Էջմիածին և տեղավորեցին ճեմարանի և առհասարակ բոլոր ազգային գույն ունեցող ժողովների մեջ իբրև գործող անդամ, մանավանդ ուսումնարանական հանձնաժողովի մեջ: Եվ այդ նպատակով, որ ճեմարանի և ուսուցչության միջոցով նոր սերունդ պատրաստե՝ հակակեղեցական ոգով տոգորված, ուսումնարանական հանձնաժողովի միջոցով դպրոցներն իր ձեռքն առնե, տեղավորե ուսուցիչներ, որոնք իրենց կուսակցության են պատկանում: Սի խոսքով լիակատար տիրում են Վեհին: Գոնե այժմ: Ուղտը Վեհի կամքն իր բռան մեջն է առել, ինչ կամենում է, անել է տալիս. զոռով ետխկոպոս եղավ. բայց ինչո՞ւ համար, չենք հասկանում. ո՞չ միաբանությունն է ընտրել, ո՞չ էլ ժողովրդից թուղթ ունի: Իր կյանքումը դեռ մի ուղիղ պատարագ չէ արել, իր կյանքումը առանց խայտառակվելու մի քարոզ չի խոսեցել, եկեղեցական արարողությունից միանգամայն բոլորիկ և հարյուրը յաթիւր է գրում, ապիկար է թե իբրև ուսուցիչ, թե իբրև տեսուչ, նախանձով լցված, շողոքորթող, խաբեբա, ստախոս, կեղծավոր, գող, փողասեր, փառավետ... ահա այն արժանավորությունները, որոնց համար ձեռնադրեց և որան Վեհչր:

Վեհի վերջին ուշագրավ և ապօրինի գործերն են՝

1. Գաղտնի կերպով (Մեսրոպի. Սիրական Տիգրանյանի և Բաբգենի ձեռքով) Հայրապետական իրավունքները պաշտպանող և եկեղեցու շահը որոնող հին ուսուցչական խումբը արձակեց և տեղը լցրեց չավարտած ուսանող-ուսուցիչներով, որովհետև նոքա մեկ մեկ տարի ևս ունեին ուսումն ավարտելու, պակասում էր դրամ, ուստի և լի ու լի ոոճիկներ կապեցին ճեմարանում, նույնիսկ անցած առարկաները նորից պահանջեցին սովորել, որպեսզի իրանց կուսակից երկու ուսուցիչներին ևս տեղ լինի. աշակերտները բողոքեցին, բայց անհետևանք մնաց, դի կուսակցության ուժով լռեցրին նոցա:

2. Երվանդ³ վարդապետին անգործ նստեցրել են վանքում՝ դաշնակցական աշակերտների խոսքին մտիկ անելով, որոնք եկել և բողոքել էին Վեհին, թե նորան ուսուցիչ չենք ուզում, որովհետև խիստ է և ալլն:

3. Հովհաննիսյան⁴ բանաստեղծ և ուրիշները դուրս մնացին:

4. Բենիկ⁵ վարդապետին կանչել և հրամայել էր, որ պատրաստվի Երևան փոխանորդ գնալու: Այս լսելով Մեսրոպ վարդապետ ուղտը, նույն օր գնացել

էր Երեւան և մի քանի՝ 2 հոգի էր կարծեմ, դաշնակցական էր բերել և բողոքել տվել ու խանգարել:

5. Երևանի փոխանորդ առաջարկել էր ավել Մուրադբեկյան⁶ վարդապետին, որը դաշնակցական է և մի անգամ մերժված է փոխարքայի կողմից՝ իբրև անբարեհույս անձ, նորից առաջարկել ավել Բենիկի փոխարեն և Վեհայս ևս կատարեց, քանդելով նախկին վճիռը, որպես անուժ է մինչև այժմ:

6. Հուսիկ արքեպիսկոպոսի գողությունն արդարացրեց ինքը. երբ ես այս ամռան իր մոտ էի Բյուրականում, Վեհը կրկնում էր շարունակ, որ եթե նույնիսկ Հուսիկ եպիսկոպոսն արդարանա դատարանի առաջ՝ իբրև ժամանակն անցած դատ, ինքն իբրև եկեղեցու ղուլս, պատժելու է այդպիսի չարադատ գող եպիսկոպոսին... Բայց, արդարացրեց, առանց նույնիսկ նկատողություն անելու:

7. Դպրոցների և եկեղեցու կառավարությունն առհասարակ հանձնել է մարդկանց, որոնք պետության կողմից նկատված են իբրև հեղափոխականներ:

8. Սուրենյան տեղապահի բոլոր ապօրինությունները ոչ միայն սրբագործեց, այլև նորան առաջ քաշեց, կարծես վախենում էր պատասխանատվության և հաշվի ենթարկելու՝ մի բան, որ նույնիսկ Խրիմյան Հայրիկն անվախ արավ՝ Երեմիա եպիսկոպոսից⁷ գոնե հաշիվներ պահանջելով:

9. Անցյալ օրը միաբանական ժողով գումարվեցավ, որպեսզի զանազան վանական և եկեղեցական խնդիրների համար պաշտոնյաներ ընտրվեն: Հայր Կարապետ⁸ առաջարկեց, որ ներքին անհաշտության վերջ դնենք նախապես, որ կարողանանք խղճի մտոք ընտրություն անել՝ արժանավորագույնների կենտրոնացումով: Տեղապահ Սուրենյանը արգելեց խոսելու այդ մասին և անմիջապես անցան ընտրությունների և բանից դուրս եկավ, որ նախ թերթիկների վերև դրած ունեին տեղական կուսակցության մարդոց անունները և ընտրություններ կատարեցին եկեղեցու և վանականության կանոններ մշակելու մարդիկ, որոնք եկեղեցու պատմություն չիմանալուց հետո եկեղեցին կործանելու համար են մտել վանք: Այս ընտրություններից և ոչ մեկի համար իմ ընկերներից և ոչ մեկը չընտրվեցավ և այս տեսնելով հանդերձ Վեհը այս միակողմանի և կործանարար ընտրությունները հաստատեց, միայն մեկին ասեմ, Հուսիկ արքեպիսկոպոսին Արարատի խմբագիր ընտրեցին... Ո՛վ կուրություն...

10. Բառի բուն նշանակությամբ մեզ հալածում են. այդ տեսնում է Վեհը և համակերպվում է նոցա և ընդառաջ է դնում նոցա ցանկության:

11. Ամեն բան կառավարում է կուսակցությունը հանձին Ուղտի և նորա արբանյակների: Ամեն բանի համար Վեհը խորհրդակցում է նախ Մեսրոպի և և Սիրական Տիգրանյանի հետ, որ կուսակցության կողմից նշանակված է վանքի և Վեհի վրա իշխելու: Նորից կազմակերպել են սկսում դաշնակցական հին միջոցներով և ոչնչի չեն խնայում:

12. Օժման հեռագիրը կայսեր երևի կարդացած լինես թերթերում. կայսրն այնպիսի անպատիվ հեռագիր էր խփել, որ բոլորիս էլ խոցեց. Վեհին ոչ թե նորին սրբություն, այլ սրբազնություն էր տիտղոսել, իջեցնելով եպիսկոպոսի պատվին...

Մեր գլխին գալիք կա...

Կատարյալ հիասթափություն...

Շահմուրադը կպատմե մանրամասնարար քեզ իր տպավորությունները:

Վեհին բան մի՛ գրիր, զի բոլորն ասում է Մեսրոպին...
Սիրալիր բարեններ քեզ և հարցանողաց:

Համբույրներով քեզ Կ. Վ.

¹ Ա. Մանթաշյանի տիկնոջ մասին է խոսքը:

² Գաշնակցության պարագլուխներից մեկը:

³ Այժմ՝ պրոֆ. Նրվանդ Տեր-Մինասյան:

⁴ Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյան:

⁵ Կոմիտասի ընկերներից, հետազոտում հրաժարվեց հոգևոր կոչումից և հանդես
եկավ էջմիածնի միաբանության ներքին կյանքին վերաբերող մերկացնող հոգվածներով:

⁶ Հետազոտում Խորեն Ա՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

⁷ Կաթողիկոսի տեղապահ Խրիմյանից առաջ:

⁸ Կարապետ վարդ. Տեր-Մկրտչյան, հայ հին գրականության տեքստերի ուսում-
նասիրող:

1912 Ձ5/ԺԹ [դեկտեմբեր] Կ. Պոլիս
Pangaldi, № 83 (47)

Սիրելի Արշակ.

Նրկար ժամանակ է, ուզում եմ քեզ նամակ գրել, բայց այսօր վաղն ասե-
լով ցարդ ուշացավ:

Արդեն մասնակի տեղեկանում եմ և գիտեմ, թե այժմ ո՞րքան սուրբ ու
ազնիվ քո սիրած ու պաշտած, կշռած ու մարսած գործն ես մշակում՝ հայուն
ապագան է այդ քու հոգածությանդ առարկան, ուստի բոլոր ուժդ իրավամբ,
դեպի գերագույն նպատակն ես ուղղած: Արդեն հայ ազգը քեզ շա՛տ բան է
պարտական. դո՛ւն էիր առաջինը, որ լավ ըմբռնեցիր, թե մեր ապագան հար-
թելու համար պետք էր. նախ մեզ օտարներին ծանոթացնել. ցույց տալ, որ
մենք կենսունակ ենք, լուսո ուղեգիր ու կարապետ ենք խավար վայրերում,
շինարար ենք... Եթե մեր մեջ տնականությունն ու միությունը պակաս է եղած,
պատճառն այն է, որ ազատ շունչ չենք քաշել, նույնիսկ մեր իրր անկախու-
թյան օրերումն իսկ՝ հալածվելով տգիտությունն ու խավարեն, ավերակեն ու
ավարեն, սրեն ու հրեն... բայց աննկուն բան ունինք մեր մեջ, մի ամուր հույս՝
դեպի ապագա լուսո կանթեղը հառած ենք մեր հայացքները, դեպի այն կան-
թեղը, որ հայ ժողովուրդը, իր թագավորությունն ու իշխանությունը կորցնելեն
հետո, տարել ու կախել է բազմաբեղուն ու երկնավետ Արագածի գագաթը՝
երկնքի անտես առաստաղեն, անթել կապով, որ մարդիկ՝ խավար ու ավարա-
ռու ձեռք տալ չկարողանան և գոնե նորա լուսո նշույլը ցայտե մեր վերա և
մեր ապագա կյանքը երազենք: Դո՛ւն էիր առաջինը, որ մեր նախնյաց ստեղ-
ծադորժ հողին թղթերով ու գրքերով նկարեցիր ու ցուցադրեցիր օտար աշ-
խարհի մեջ քաղաքակրթության հարազատ զավակներին, որ մե՛նք ևս իրենց
շավիղն ենք բռնել, մե՛նք ևս իրենց ճամփան ենք քայլել, մե՛նք ևս մեր ձեռքից
լույս բռնել, և, թեպետ ջանացել են դեռերը փչել ու մարել մեր կյանքը, բայց
փչողներն են խորտակվել ու մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապա-
վինելով գիտության ու կրթության, որ թեև մերն է եղել՝ իբր արևելքի զավակներ,
բայց մեր ձեռքեն դուրս է ելել ու նվրոպան լուսավորել. արդ, քանի որ մեզ հա-

մար անծանոթ չէ մեր մտքի նախատիպը և կարողությունը, որ այժմ նվիրույթից է, որ մեղ լուսավորում է, ինչու և շունենանք մեր իսկ լուսո ջահ՝ մեր ձեռքին: Դու և իր առաջինը, որ հրավիրեց հայի գեղարվեստական ստեղծագործությանց ծանոթացնելու քաղաքակիրթ աշխարհին... Արդ, հանգիստ վայելի՛ր և ուրտխացի՛ր, ուժ առ և ուժ տուր, պի՛նդ կեցիր, որ բարձրացած դարավոր ազատության ձգտող կո՛հակներն ու ալիքները չզարնվեն ժայռին ու այս անգամ ալ փշրվին, որի վերջը թերևս կորստարեր լինի մեղ համար:

Ծաղենք այժմ զգացմունքներն ու դատենք իրողությունը:

Ինձ այնպես է թվում, թե մենք մինչև նվազագույնով առաջին ու դրական քայլը չանենք, երբեք չենք կարող երկրորդի մասին մտածել կամ մեծամեծս ձգտել: Արդ, մեր երկիրն սկզբեն եղել է կոպխնձոր արշավող ու շրջակա հզոր պետությանց աշխարհակալության ձանապարհի վերա և պահել է ցարդ նույն վիճակը: Մենք այժմ իրապես ուսաց շահի առարկան ենք. մեր երկիրն արդեն որոշված է, այսօր կամ վաղը ուս պետության բաժին դառնալու: Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ. թեպետ և երկուքի վերջակետն էլ նույնն է, տարբեր ուղիով միայն: Առաջինն է սառավելագույնը՝ ինքնուրույն ու անկախ լինելով իրր պատվար ցցվել ուս գիլանագիտության առջև և երկրորդը՝ նվազագույնը՝ ապավինել Քեոի Ռուսին և միաձուլվ հայություն սահմանել: Երկուքն էլ նույն է, բայց երկրորդն իրագործելի՝ շահերի նույնության վերա հենվելով, իսկ առաջինը անիրագործելի: Ռուս կառավարությունը ծայրագույն արևելքեն տուժեց. ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմի մնաց. արդեն Պարսկաստանը բաժանված է իրապես Անգլիո և Ռուսիո միջև. ալսպես հայերը պարսկական լծեն պիտի ազատվեն և միանան ուսաց հայոց և փոխադարձաբար ուժովնան. արդ հերթն եկել է մեզ՝ տաճկահայերիս: Ես չե՛մ կարող մտքես անցնել, որ ուս կառավարությունը իր շահերը ղոհն մեզ. դի նա չէ՛ կարող թույլ տալ, որ այս բաժինն ավելի լավ վիճակ ունենա, քան իր երկրի հայերը. ուրեմն մի՛շտ ձգտելու է պահել մեղ (եթե իրան չմիանանք) իրան կարոտ վիճակի մեջ, որպեսզի ապագա դրավման ձեռնտու տարր հանդիսանանք. արդեն մեր մեծ ցարդերն ապացույց են ասածներիս: Ռուս թերթերն էլ ճիշտ այս կետն է, որ շարունակ շեշտում են, թե մեր փրկությունը կռելու և կոփելու ենք Փերպուրկի [Պետերբուրգի] պարիսպներու դռներուն առաջ. ա՛յս էր պնդել ժամանակին Լոռիս Մելիքով Գևորգ Դ. կաթողիկոսին զղուշացնելով (երբ սա ուս-տաճկական պատերազմի ժամանակ, փրկությունը տեսնելով ու հուսալով տաճիկներեն, գրեթե բացարձակապես սպասելիս է եղել տաճիկներին էջմիածնի մեջ): Արդեն քաջ դիտես, որ Անգլիո, Ֆրանսիո ու Ռուսիո միության գլխավոր նպատակն էլ այս էր: Ուրեմն չի՛ք փրկություն արտաքո Ռուսիո: Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բարոյապես և նյութապես և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերե մեղ մեծ ազատությունը. շտապելով, առաջինը շառած երկրորդ քայլի դիմելով բոլորովին պիտի կորչենք. տաճիկեն ո՛չ մի հույս մի ունենաք, մի սպասեք. նորա ուղեղը քարե ժայռից է, դարգացման անընդունակ, լոկ փշրվելու համար պիտանի և ոտքի տակը ստլահատության հարմար:

Զպե՛տք է բաժանվենք. չպե՛տք է խաբվենք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն, միանալու ենք և դործնական ճամփան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ուսի իշխանության:

տակ, երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը ուսա հեղափոխությունն է, որ պիտի անե, ո՛չ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն, սակայն պատրաստվելով, լեհերու պես զուտ ազգային շավիղը բռնելով. եվրոպական մարդկային գաղափարները որքան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արեին տակ կկիզվեն:

Ես վախ չունիմ, թե ուս կառավարության մեջ կհալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիվ մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվենք կվաստկենք. ես այս կարծիքն ունիմ:

Ցանկանալով քեզ սրտագինս եռանդ, ուժ ու քաջություն, մայթեմ, որ մեզի նոր տարուն բերելիք նվերդ լինի համեստ ու համեղ բան:

Համբույր և կարոտով
Քույր Կոմիտաս վարդապետ.

1913 7/8 [օգոստոս]

Ս. Էջմիածին

Սիրելի Արշակ.

Գուշկածիդ պես՝ նամակդ ստացա այստեղ: Ձե՛մ եկել մնալու, ալ միայն մատենադարանում աշխատելու և գեղջուկ երգեր հավաքելու: Առաջին գործս երեկ վերջացրի, երկրորդն եմ սկսելու վաղը: Մինչև սեպտեմբերի կեսերը Կ. Պոլիս կլինեմ: Վաղը կերթամ դյուղերը: Բավական նոր բաներ են դուրս եկել:

Շատ լավ ես արել, որ ծովի լողանքներ ես առնում. քեզ շատ լավ ազդեցություն կթողեն և կառողջանաս. ըստ կարելիության երկար մնացիր տեղումդ:

Ուբախությունմբ և հպարտությունմբ եմ հետևում գործունեությանդ, մանավանդ այսպիսի հանգամանքներում, երբ ավելի զորեղ զենք չունենք՝ քան մեր հին ու նոր եկեղեցուն ու աշխարհիկ և դիտական ու գեղարվեստական կարողությունները ցուցադրել, որ տեսնեն, թե իբր ողորմություն չէ՝ որ խնդրում ենք, այլ իբր մարդկային զարգացման զորավիզն ազդ ենք հրապարակ ելնում: Երանի՜ թե սկզբեն այս զենքն առնեինք. առանք մի զենք, որ ավելի զորեղները փշրեցին. բայց մեր ունեցածը՝ անընկճելի և անխորտակելի է՝ հայու սիրտն ու հոգին է իբր զենք շաշում: Լավ է ուշ, քան երբեք: Մանավանդ, երբ հրապարակ է ելնում հայ հանձարը՝ հայ անձերի, կաղմակերպիչների, երգողների, նվագողների և խոսողների ձեռքով, արդեն ղինաթափ են լինում ամեն նախապաշարումներ միանգամայն:

Գալով այստեղի գործերին, ո՛չ մի միտքարական բան չկա: Գիտես, որ՝ մարդ է, որ գործ է զերկիր, իսկ Վեհին գուն ճանաչում ես անձամբ. փառասեր, փողասեր, ժլատ, ապիկար, թույլ՝ շողոքորթություն սիրող, խաբվող, գործից բան չհասկացող. ինչ ասում են՝ կատարում է: Շատ անմխիթարական է. խաղալիք մի խումբ մարդոց ձեռքին, որոնք 1—7 պաշտոնի դուխն են անցել, իսկ իմ ընկերներս անպաշտոն են թե՛ վանքում, թե՛ դուրս. մեկը վարժապետ է ուսաց գիմնադիպյում, մյուսը քաշված. Կարապետ սրբազանը

նույնիսկ սենյակ չունի վանքում, այլ խցկվել է Հուսիկ վարդապետի սենյակում ու պարապում է մատենադարանում Գարեգին վարդապետի հետ միասին:Շենքեր՝ նորանոր, այստեղ, այնտեղ ցրված՝ քարակոփ, բայց ներքին շենքերը՝ վանքի գործերը՝ ավերակ են:

Ես էլ հագիվ եմ ելել այս ճահճից. ո՞ւր եմ գալու: Նույնիսկ մեկ բերան չասացին, թե ինչո՞ւ չես դալիս, ինչո՞ւ չես մնում. վանքի երգեցողությունը գյուղականն է:

Իմ գործերս Կ. Պոլսում շատ լավ են. աշակերտներ եմ պատրաստում, որ բեռս թեթևացնեմ:

Բոլոր ընկերներս քեզ բարեկամ են:

Ճանկանամ քեզ կատարյալ քաջոգչություն և սկսած գործերիդ հաջողություն:

Համբուրիվ քույդ

Կոմիտաս վարդապետ.

[բացիկ]

[10 սեպտ. 1914]

Սիրելի Արշակ բիժա.

Ամեն իրիկուն opera եմ գնում. վագների երկերի շարն են աալիս այս և եկող շարաթ. շատ ուրախ եմ, որ սկզբից հասա: Թեև զբաղմունք շատ ունիս, բայց և զուռնաչությունդ մի՛ մոռանար, հանկարծ կգամ և հոգիդ կառնեմ հա՛ա՛ա՛... Իշխանից նամակ և զրամ ստացա, որոշել է տասն օրինակը Մուրադ-Ռափայելյան վարժարանի երգիչ կամ նվաղող սաներին բաժանել: Մի օրինակ էլ իր համար է ուղև. հարկավ նվեր կուղարկեմ: Քեզ էլ գրած է:

Քույդ Կոմիտաս.

Սիրելի Արշակ.

Երրորդ հեռագիրն առա, կանչում են. այս քանի օրս կելնեմ:

Պոլսի երաժշտական քննիչ հանձնաժողովին ինչ որ պետք էր դրեցի և առևտրական էլ դարձուցի իրանց: Ինչ կվերաբերի իմ կազմած պատարագի արարողության, ուղղակի անհնար է այնտեղի եկեղեցիներում գործածելու համար, որովհետև խիստ բարդ է՝ ըստ պահանջման եղանակների խորհրդավորության, ո՛չ մեկը կառավարել կարող է իմ պատարագը, եթե նույնիսկ հարմար երգեցողներ իսկ գտնելու լինին: Կ. Պոլիս և առհասարակ Ասիան չէ տալիս թավ և բամբ ձայներ, որոնք մեծ դեր են խաղում բազմաձայնության մեջ. մյուս կողմից, իմ պատարագը դրված է 1—9 ձայնով, այնպես որ այդքան նուրբ դասակարգություն ձայների նոքա ըմբռնել, գտնել ու գործադրել անկարող են. իսկ նույնը, ես ինքս եռաձայնի վերածելն անմտություն եմ համարում, որովհետև խորհրդավորությունը կվերանա և տեղը կանցնե միայն և միայն ցամաք ու մերկ արվեստ, որ ոչ մի ժամանակ չեմ ցանկանա կատարել աւ լսել: Այս է պատճառը, որ չեմ առաջարկել իմ պատարագը, որ դեռ նույ-

նրակ շատ լուրջ ու մանրակրկիտ ուսումնասիրության է կարոտ, վերլուծության է կարոտ. ես չեմ շտապում: Մյուս կողմից, ի՞նչ կասեն, երբ ես խայտառակեմ նոցա գրվածքը և տեղն իմն առաջարկեմ. չէ՞ որ կասեն, դիտմամբ է ցեխը կոխել մերը, որպեսզի իր գրածին ընթացք տա: Աստված չանե, այդ անողը չեմ: Նոցա համար նույն արժեքն ունի թե՛ իմ և թե՛ մի տիրացուի կազմածը (վերջինս գուցե ավելի արժեքավոր լինի), որովհետև ոչ նորա պակասության և ոչ իմի առավելության հասկացողությունն ունեն:

Շատ սիրալիր բարևներս Չուօ-ին, Մանվելյանին, Էդգարին¹ և այլ հարցանողաց, եթե տեսնես:

Քույր անձնվեր և սիրող
Կոմիտաս.

[Ծրարի վրա՝ 26 սեպտ.
1914, Scharlottenburg].

¹ Հաժանաբար նկարիչ Էդգար Շահին:

НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА КОМИТАСА

М. О. МУРАДЯН

(Р е з ю м е)

Обширная переписка Комитаса в основном утеряна. Сохранились письма поэту Ованесу Туманяну по вопросу о создании оперы «Ануш», а также письма, написанные из Берлина К. Костаняну, инспектору Эчмиадзинской академии Геворкян. Последние дают представление о тяжелых условиях жизни композитора в годы учебы в Берлинской консерватории. Частично сохранились также отрывки писем, адресованных певице М. Бабалян. В полученных недавно из Парижа копиях писем, написанных ей Комитасом, содержатся ценные сведения о творческой работе Комитаса.

Публикуемые в настоящем номере журнала письма Комитаса относятся к периоду 1902—1914 гг. Они адресованы редактору парижского журнала «Анаит» А. Чопаняну. Эти письма получены из Парижа вместе с богатым архивом А. Чопаняна, поступившим в Музей литературы и искусств Академии наук Армянской ССР. Они проливают новый свет на творческую и музыкально-общественную деятельность Комитаса, дают возможность полнее ознакомиться с его политическими убеждениями, его взглядами на национально-освободительное движение армян, направленное против султанской Турции. Письма отражают надежды Комитаса на освобождение армянского народа с помощью русской революции.